Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի **<u>ինֆորմատիկա 11 դասաժամ, մաթեմատիկա (հանրահաշիվ և երկրաչափություն) 11 դասաժամ, ռուսաց լեզու 9 դասաժամ, ֆիզկուլտուրա 6 դասաժամ, տեխնոլոգիա 6 դասաժամ</u>** թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում):

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի հունիսի 12-ից մինչև հունիսի 25-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի հունիսի 28-ին՝ ժամը 12:00 - ին,** Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Երանոս,1-ին փողոց,շենք՝ 53:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 77 15 52 հեռախոսահամարով: